



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարություն
«Ատոմային էլեկտրակայանների շահագործման
հայկական գիտահետազոտական ինստիտուտ»
Փակ բաժնետիրական ընկերություն
«ՀԱՅԱՏՈՍ»

06.11.2023թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2163-Ա, առ 18.10.2023թ. հրամանի, 2023թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 03-ը գործուղվել եմ ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), մասնակցելու վերջինիս կողմից կազմակերպված «Ջերմատարերի և նյութերի համատեղելիությունը ջերմամիջուկային տեղակայանքների հետ և միջուկային ռեակտորների ապագան» թեմայով գիտատեխնիկական համաժողովին:

Գիտատեխնիկական համաժողովին մասնակցում էին մասնագետներ ատոմային էներգետիկայի գրեթե բոլոր առաջատար երկրներից՝ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Իտալիայից, Հարավային Կորեայից, Մեծ Բրիտանիայից, Արգենտինայից, Ճապոնիայից, Ռուսաստանից (հեռահար), Եգիպտոսից, Ալգերիայից, Հայաստանից, Կանադայից և այլն:

Գիտաժողովը, որը սկսվեց հոկտեմբերի 30-ին և ավարտվեց նոյեմբերի 03-ին, բաղկացած էր 6 նիստերից՝

- Նիստ 1* Ձեռքբերումները և առաջընթացը ջերմամիջուկային սինթեզի տեխնոլոգիաների բնագավառում,
- Նիստ 2* ԱԷՄԳ գործունեությունն առաջնային տեխնոլոգիաների աջակցման գործում,
- Նիստ 3* Ջերմամասափոխանակությունը և կոռոզիայի փորձագիտական ուսումնասիրությունը,
- Նիստ 4* Ջերմամասափոխանակությունը և կոռոզիայի մոդելավորումը,
- Նիստ 5* Ջերմատարի և նյութերի համատեղելիության առանձնահատկությունները ջերմամիջուկային տեղակայանքներում,

Նիստ 6 Նյութերի (մետաղների) և ջերմատարերի համատեղելիությունը միջուկային ռեակտորների միջավայրում:

Գիտաժողովի 6-րդ նիստին՝ դեկտեմբերի 2-ին, հանդես եմ եկել «ՀԱԷԿ ՋՋԷՌ-440 ռեակտորի իրանի վերահսկումը փորձանմուշների հետազոտման միջոցով» զեկուցումով: Ձեկուցումը խիստ հետաքրքրություն առաջացրեց մասնակիցների մոտ, քանի որ խոսքը վերաբերվում էր մոտ 27 տարի ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի ռեակտորում պահված փորձանմուշների հետազոտման արդյունքներին, որը կատարվել է Նիդեռլանդների NRG, «ՀԱՅԱՏՈՍ» ԳՀԻ ՓԲԸ և «ՀԱԷԿ» ՓԲԸ համատեղ ուժերով:

Գործուղման ընթացքում հանդիպում եմ ունեցել ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի ներկայացուցիչ պրն. Թիսոն Շոնի հետ և քննարկել ենք ՀԱԷԿ-ի անվտանգության մակարդակի բարձրացման այն ծրագրերի գործընթացներին, որը ֆինանսավորվում է ԱՄՆ կողմից, ինչպես նաև սպասվող հնարավոր ծրագրերին վերաբերվող խնդիրներին:

Հանդիպում եմ ունեցել նաև Սլովակիայի VUJE կազմակերպության գիտատեխնիկական տնօրենի և գլխավոր ճարտարագետի պաշտոնակատարի հետ, քննարկել ենք «ՀԱՅԱՏՈՍ» ԳՀԻ ՓԲԸ հետ համատեղ աշխատանքներ կատարելու հարցեր:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ



ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ